Արձանագրություն 4

«ԳՀԱՊՁԲ-ՁԻԱՀ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ձևով քիմիական նյութերի գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ
Անցկացման օրը՝ 08 սեպտեմբերի 2017թ.
Անցկացման ժամը՝ 14:00
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հովհաննես Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ՝	Արշակ Պետրոսյան
	Արուսյակ Դերձակյան
	Զոյա Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Սոֆիա Գրիգորյան

I. «ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

(նախագահ՝ Հովհաննես Հակոբյան)

«ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ին առաջարկվել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 07.09.2017թ.) շտկել N 5 չափաբաժնով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում տեղ գտած անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից չեն ներկայացվել անհամապատասխանության շտկման փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց.

- անբավարար գնահատել «ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված N 5 չափաբաժնի մասով հայտը՝ հետևյալ հիմնավորմամբ (մասնակիցը սահմանված ժամկետում չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը):

N 5 չափաբաժնի մասով գնումը հայտարարել չկայացած՝ այլ մասնակիցների կողմից գնային առաջարկներ ներկայացված չլինելու պատճառով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

II. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

(նախագահ՝ Հովհաննես Հակոբյան)

1.1 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի, «Վիոլա» ՍՊԸ-ի և «Մարգ-ֆարմացիա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերի գնահատման թերթիկները, համակարգողն ամփոփեց ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

N h/h	**Գնահատման չափանիշը**	**Գնահատականը**	**Գնահատման արդյունքը**		
			«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ	«Վիոլա» ՍՊԸ	«Մարգ-ֆարմացիա» ՍՊԸ
1.	Հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապա-տասխանության վերաբերյալ	Բավարար Անբավարար	Բավարար (N 9 չ/բ)	Բավարար (N 1-N 4, N 6-N 8 և N 10 չ/բ) **(N 5 չ/բ անբավարար)**	Բավարար (N 11 չ/բ)

Հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջների համաձայն, «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի, «Վիոլա» ՍՊԸ-ի և «Մարգ-ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատել բավարար և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին հայտարարել ընտրված մասնակիցներ՝

ա) I տեղ՝ ընտրված (հաղթող) մասնակիցներ են ճանաչվել.

- ✓ N 1-N 4, N 6-N 8 և N 10 չափաբաժինների համար «ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ն:
- ✓ N 9 չափաբաժնի համար «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին:
- ✓ N 11 չափաբաժնի համար «Մարգ-ֆարմացիա» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

III. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(նախագահ՝ Հովհաննես Հակոբյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

բ) ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքել Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարությունը էլեկտրոնային ձևով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին ուղարկելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը (09.09.17թ. մինչև 13.09.17թ.):

գ) հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

IV. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(նախագահ՝ Հովհաննես Հակոբյան)

3.1 «ԳՀԱՊՁԲ-ՁԻԱՀ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ձևով քիմիական նյութերի գնման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:00-ին, հասցեն՝ ք.Երևան, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, Աճառյան, 207 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝ Հ.Հակոբյան _____
(ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Պետրոսյան _____
(ստորագրություն)

Ա.Դերձակյան _____

(ստորագրություն)

Զ.Գրիգորյան _____

(ստորագրություն)

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս.Գրիգորյան _____

(ստորագրություն)